ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2454 - Ա **09 ապրիլի 2009թ.**

ԳԱԳԱՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ Հ. 34/48 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԻԿ ՀԱՅՐԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ՄԱՐԻԱՄ ԽՈՐԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ՀԱՅԿ ԴԱՏԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ԴԱՏԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ԱՐԵՎԻԿ ԴԱՏԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԱՎԵՏԻՔ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՎԱՂԱՐՇԱԿ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՍՈՖՅԱ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ ԱՐՏԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ՕՖԵԼՅԱ ԱՐՏԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ՀԱՅԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Դատիկ Հայրիկի Հայրապետյանի (ծնված 09.08.1936թ.), Մարիամ Խորենի Հայրապետյանի (ծնված 10.03.1939թ.), Հայկ Դատիկի Հայրապետյանի (ծնված 31.03.1965թ.), Արտակ Դատիկի Հայրապետյանի (ծնված 20.09.1969թ.), Արևիկ Դատիկի Հայրապետյանի (ծնված 09.11.1960թ.), Ալբերտ Հայրիկի Խաչատրյանի (ծնված 01.07.1959թ.), Ավետիք Ալբերտի Խաչատրյանի (ծնված 06.02.1987թ.), Վաղարշակ Ալբերտի Խաչատրյանի (ծնված 01.12.1982թ.), Սոֆյա Ալբերտի Խաչատրյանի (ծնված 20.01.1984թ.), Գագիկ Արտակի Հայրապետյանի (ծնված 20.05.1991թ.), Օֆելյա Արտակի Հայրապետյանի (ծնված 15.04.1993թ.), Սարգիս Հայկի Հայրապետյանի (ծնված 27.04.1992թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Գագարինի փողոցի հ.34/48 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 177քմ, որից 67քմ մակերեսով հողամասն Երևանի քաղաքապետի 26.02.1999թ. հ.198 որոշմամբ Դատիկ Հայրիկի Հայրապետյանին, Մարիամ Խորենի Հայրապետյանին, Հայկ Դատիկի Հայրապետյանին, Արտակ Դատիկի Հայրապետյանին, Արևիկ Դատիկի Հայրապետյանին, Ալբերտ Հայրիկի Խաչատրյանին, Ավետիք Ալբերտի Խաչատրյանին, Վաղարշակ Ալբերտի Խաչատրյանին, Սոֆյա Ալբերտի Խաչատրյանին, Գագիկ Արտակի Հայրապետյանին, Օֆելյա Արտակի Հայրապետյանին, Սարգիս Հայկի Հայրապետյանին տնօրինման և օգտագործման թողնված հողամասն է: Բնակելի տան զբաղեցրած հողամասին կից օգտագործվող 110քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 18.11.2008թ. հ.227, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 06.04.2009թ. հ.20/2-Ե/188 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 25.03.2009թ. հ.20-Ել-2305 եզրակացությունը, համաձայն որի Գագարինի փողոցի հ.34/48 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի

տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Գագարինի փողոցի հ.34/48 հասցեում Դատիկ Հայրիկի Հայրապետյանին, Մարիամ Խորենի Հայրապետյանին, Հայկ Դատիկի Հայրապետյանին, Արտակ Դատիկի Հայրապետյանին, Արևիկ Դատիկի Հայրապետյանին, Ալբերտ Հայրիկի Խաչատրյանին, Ավետիք Ալբերտի Խաչատրյանին, Վաղարշակ Ալբերտի Խաչատրյանին, Սոֆյա Ալբերտի Խաչատրյանին, Գագիկ Արտակի Հայրապետյանին, Օֆելյա Արտակի Հայրապետյանին, Սարգիս Հայկի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 67քմ մակերեսով հողամասի չափով, բնակելի տանը կից հողամասի հողօգտագործման իրավունքը 110քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 177քմ մակերեսով հողամասի և 110քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Գագարինի փողոցի հ.34/48 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Գագարինի փողոցի հ.34/48 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Դատիկ Հայրիկի Հայրապետյանի, Մարիամ Խորենի Հայրապետյանի, Հայկ Դատիկի Հայրապետյանի, Արտակ Դատիկի Հայրապետյանի, Արևիկ Դատիկի Հայրապետյանի, Ալբերտ Հայրիկի Խաչատրյանի, Ավետիք Ալբերտի Խաչատրյանի, Վաղարշակ Ալբերտի Խաչատրյանի, Սոֆյա Ալբերտի Խաչատրյանի, Գագիկ Արտակի Հայրապետյանի, Օֆելյա Արտակի Հայրապետյանի, Սարգիս Հայկի Հայրապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա–Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**